յունքի մեջ երկրորդ տեղն էր գրավում. իսկ թուրք բնակչության՝ առաջնակարգ և մի քանի գյուղերի համար ապրուստի միակ աղբյուրն էր։ Ինչպես հայկական ուրիշ գավառների մեծագույն մասում, Զանգեզուրումն էլ անասնապահությունն երկհարկ բնույթ ուներ, այսինքն՝ ձմեռն անասունը պահվում էր գյուղերում կամ գյուղերի մոտ, համեմատաբար ցածրադիր վայրերում, իսկ ամառն արածում էր լեռնային բարձրադիր մարգագետիններում՝ յայլաղնէրում։ Այս ամառային արոտավայրերը մեծագույն տարածություն էին գրավում Սիսիանի և մասամբ Գորիսի վարչական շրջաններում, բայց շատ ավելի սահմանափակ էին Կապանում։ Առաջին երկու շրջաններում յայլաղնէրը ծածկում էին ամբողջ Ղարաբաղի հրաբխային սարահարթը, ուր բացի Զանգեզուրի գյուղացիությունից, բարձրանում էին նաև Մուղանի դաշտի անասնապահները, իսկ Սիսիանն օգտվում էր նաև Բարգուշատի լեռնաբազուկի բարձրադիր արոտավայրերից։

Ձմեռն առավելապես Կապանի անասունն օգտվում էր Արաքսի ափին Ողջիի (Օխչիի) գետաբերանի մոտ փռված Զանգելանի դաշտից, որտեղ կառուցված էին թե՛ խոշոր տավարի և թե՛ մանր «ապրանքի» համար հատուկ գետեղարաններ։

Մինչև սովետական կարգերի հաստատվելը դրանք պատկանում էին մասնավոր սեփականատերերին, իսկ այժմ՝ կոլտնտեսություններին։ Ձմեռը ոչխարի այդտեղ արածելուց դաշտի փոշոտ թփերի ճյուղերի վրա մնացած էր լինում այնքան պոկված բուրդ, որ գարնան սկզբին մոտակա գյուղերից չքավոր ընտանիքները շտապում էին գալ և այդ բուրդը հավաքելով՝ կարողանում էին բավականին հոգալ իրենց կարիքները։ Յայլաղնէրում խոշոր տավարի համար գոմեր չէին կառուցվում, իսկ ոչխարի համար սարքվում էին արխաշնէր։ Ամեն մի գյուղ աշխատում էր կառավարության կամ մասնավոր հողատերերի հետ կապված պայմանագրերով ապահովել իր յայլաղի օգտագործումը՝ իր ավանդական իրավունքը համարելով մեկ անգամ օգտագործած տարածությունը հաջորդ տարին ևս գերադասորեն ինքն օգտագործելու։

Անասունի կերը լրացվում էր խոտհարքի վայրերում հավաքած վայրի խոտով և մասամբ այդ նպատակով կատարված հատուկ ցանքսերով։ Խոտհարքի վայրերը չէին լինում անպատճառ գյուղի մոտակայքում։ Դրանք մեծ մասամբ դասավորված էին յայլաղնէրի ստորադիր լեռնալանջերին։ Խոտը հարում էին գերանդիով։ Հատկապես առանձին սնահավատություններ՝ շաղկապված խոտհարքի հետ մեզ չհաջողվեց գտնել։ Կերաբույսերի ցանքսերի տարածությունը բոլոր շրջաններում շատ սահմանափակ էր, շատ ավելի պակաս, քան թե, օրինակ, հարևան Նախիջևանում և Արարատյան հովտի այլ վայրերում։

Հնձից հետո գյուղի անասունն ազատ արածում էր հնձած բոլոր արտերում։

Շատ բնորոշ է անասունի տեսակների տեղաբաշխումը Զանգեզուրի երեք վարչական շրջաններում, բայց հեղափոխական ժամանակամիջոցի համար ճիշտ տվյալներ չկան, իսկ այժմյան տեղաբաշխումն էլ ճիշտ գաղափար չի կարող տալ հնի վերաբերյալ, որովհետև կոլտնտեսային կարգերում խոշոր փոփոխություն է առաջ եկել, մանավանդ գյուղատնտեսության մեջ տրակտորի և այլ մեքենաների ներմուծումով, որոնք մեծ չափով փոխարինել են քարշող անասուններին։